

ԿՈԴ
050.0176 Ն. 26.10.20

26 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 176-Ն

**ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(2020 թվականի երրորդ եռամսյակ)**

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը, **ղեկավարվելով** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1.Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝**

Մարտին Գալստյան

2020 թ. հոկտեմբերի 27
Երևան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2020թ. երրորդ եռամսյակ)

2020 թվականի հոկտեմբերի 26-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:

Համաձայն [«Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման»](#) կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլային շեմի սահմանաչափը (այսուհետև՝ նաև՝ կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿՀԲ)): Կենտրոնական բանկը ԿՀԲ-ն սահմանելիս առաջնորդվում է [«Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը»](#) փաստաթղթի դրույթներով, համաձայն որի, ԿՀԲ չափը սահմանելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համար հիմք են հանդիսանում Բազելյան մեթոդաբանությամբ գնահատված վարկեր/ՅՆԱ ցուցանիշի ճեղքվածքը, համակարգային ռիսկի զարգացումները բնութագրող ֆինանսական ցիկլի ինդեքսը և վաղ ահազանգման այլ ցուցանիշներ:

Կապիտալի հակացիկլիկ շեմի վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է հետևյալ փաստերի համապարփակ վերլուծությամբ.

1. 2020թ. երկրորդ եռամսյակի դրությամբ մասնավոր հատվածին տրամադրված վարկեր/ՅՆԱ ցուցանիշը կազմել է 70.6%¹: Այս ցուցանիշի համար հաշվարկված ճեղքվածքը (վարկեր/ՅՆԱ-ի տարբերությունը իր երկարաժամկետ տրենդից) կազմել է 5.24 տոկոսային կետ, որը, այլ հավասար պայմաններում, ենթադրում է ԿՀԲ դրական դրույքաչափի կիրառում²: Նախորդ եռամսյակի համեմատ վարկեր/ՅՆԱ ցուցանիշի առաջանցիկ աճը առավելապես պայմանավորվել է ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում արձանագրված տնտեսական խորը անկմամբ³: Սակայն, հարկ է նշել, որ Կենտրոնական բանկը ԿՀԲ դրույքաչափը սահմանելիս հիմնվում է նաև վաղ ահազանգման այլ ցուցանիշների վրա, որոնց համապարփակ վերլուծության արդյունքում բացահայտվում և գնահատվում են վարկավորման շուկայի համընդհանուր օրինաչափությունները և տնտեսության դիրքը ֆինանսական ցիկլում⁴:
2. 2020թ. մարտ ամսից, տնտեսական աճի հեռանկարի վրա կորոնավիրուսի տարածման բացասական ազդեցությամբ և ֆինանսական համակարգի վրա

¹ Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՅՆԱ-ում (%-ով):

² Բազելյան կոմիտեի մեթոդաբանության համաձայն, դրական ԿՀԲ սահմանելու համար որպես մեկնակետ առաջարկվում է կիրառել վարկեր/ՅՆԱ ցուցանիշի 2 տոկոսային կետ ճեղքվածքը:

³ 2020թ. երկրորդ եռամսյակի իրական ՅՆԱ-ի տ/տ անկումը կազմել է 13.7%, (անվանական ՅՆԱ-ի տ/տ նվազումը 14.7%):

⁴ Տես՝ « Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը » փաստաթուղթը, <https://www.cba.am/Storage/AM/downloads/finstability/Capital.pdf>

վերջինիս անբարենպաստ ազդեցության և անորոշությունների մեծացման արդյունքում, ՀՀ վարկային շուկայում գրանցվել են նոր տրամադրվող վարկերի ծավալների կրճատման միտումներ: Մասնավորապես, նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածների համեմատությամբ, ինչպես տնտեսության վարկավորման ընդհանուր հոսքերի, այնպես էլ առանձին ոլորտային վարկավորման (սպառողական վարկեր, հիփոթեքային վարկեր, բիզնես վարկեր) մասով գրանցվել է նվազում կամ աճի տեմպերի դանդաղում:

3. Հաշվի առնելով տնտեսական ակտիվության հեռանկարի վրա կորոնավիրուսի համավարակի ունեցած բացասական ազդեցությունը, սեպտեմբեր ամսից վերջինիս երկրորդ օլիքի ուժգնացումը, ինչպես նաև հայտարարված ռազմական դրությունը և առկա անորոշությունները, Կենտրոնական բանկը հնարավոր է համարում վարկավորման աճի տեմպերի դանդաղման միտումների պահպանումը նաև մոտակա հեռանկարում:

Վերը բերված փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում, նպատակ ունենալով մեղմելու ֆինանսական համակարգի վրա կորոնավիրուսի տարածմամբ և ռազմական դրությամբ պայմանավորված հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպես նաև նպաստելու ՀՀ տնտեսության վարկավորման գործընթացի անընդհատության պահպանմանը, **Կենտրոնական բանկը նպատակահարմար է գտնում կապիտալի հակացիկլիկ բուժքերի դրույքաչափը թողնել անփոփոխ՝ 0% մակարդակում:**